

ցել է այն սովորությունից, որ գլուղում նա-
մակները գրում էին բաճակները, որոնք աստ-
վածաբնի ընթերցմամբ քիչ թե շատ ծանոթ
էին այս շաղկապի նման կրկնական կիրառու-
թյուններին:

Գ. Գարեգինյանի գիրքը բաղկացած է 363
էջից: Մեր հաստատ համոզմամբ նյութը կարե-
լի էր ներկայացնել ավելի քիչ էջերում՝ գիրքը
ազատելով վերացական ու աստատ դատողու-
թյուններից, փաստերի կուտակումներից, կրկ-
նություններից, ավելորդ մանրամասնություն-
ներից և այլն: Բայց զարմանալիս այն է, որ
հեղինակը այն կարծիքին է, թե շաղկապների
մասին ավելի մեծ աշխատություն կարելի էր
գրել: Նա մի բանի անգամ նշում է, որ շաղ-
կապներին վերաբերող այսինքն կամ այնինքն հար-
ցը կարող է ավելի մանրամասն կամ հասուն
առումնասիրության (սե՛ս, օրինակ, էջ 209)՝
Այդ զեպքում, հետաքրքիր է, բանի՝ էջանոց
գիրք պետք է գրել շաղկապների ուսումնասի-
րությունը սպասելու համար, թե՛ ընդհանրապես
այդ թեման անսպասելի է: Իհարկե, զույցն ոչ
միայն շաղկապների, այլև լեզվական ավելի
փոքր միավորների ուսումնասիրությունը սպա-
սել հնարավոր չէ, եթե շեշտը դնում ենք փաս-
տերի կուտակման և գրանց նկարագրման վրա:
Բայց պատկերք փոխվում է, երբ շեշտը դնում
ենք ընդհանրացումների վրա, մի բան, որ հաշ-
վի չի առնվում վերջին շրջանում հրատարակված
մի շարք լեզվաբանական հաստատ գրքերում,
որոնց ծավալը մեծանում է ի հաշիվ նույնա-
տիպ փաստերի կուտակման, կրկնությունների
և ավելորդ դատողությունների:

Մի քանի խոսք տերմինաբանության մասին:
Հայ բերականական տերմինաբանությունը գուտ
ազգային է, և երանում ստար փոխառությունե-
ներ չկան ձյամ համարյա չկան: Թրակացու բե-

րականության մեկնիչները և հետագա շրջանի
հայ բերականները հոմա-լատինական բերա-
կական տերմինների խմատներն են միայն
վերցրել՝ կազմելով գրանց համապատասխան
հայերեն բառերը (բերականություն, բայ, դե-
րանան, նախադասություն, ենթակա և այլն):
Սակայն վերջերս որոշ լեզվաբաններ հրաժար-
վելով այս լավ ավանդից և գնալով հեշտ հա-
նադարով՝ ուղղակի գերադասում են ստար
տերմինների գործածությունը, առանց մտածե-
լու, որ այսպիսի լեզվաբանի խնդիրներից մեկն
էլ բերականական տերմինաբանության հետագա
մշակումն ու զարգացումն է: Այսպես, որոշ լեզ-
վաբանական-բերականական աշխատությու-
նում ստար տերմիններն ուղղակի աչք են ծա-
կում՝ տիրություն անելով «ֆունկցիոնալ» սկսած
մինչև «ստարակառույթ» և «մորֆոմալից» բա-
կրած մինչև «լեքսիկալ» ոլորտներում: Գա-
լեզինյանի գիրքը այս թերությունը շունի,
բայց երանում էլ գործածված են որոշ ստար
տերմիններ, որոնց համարմեքները ունեն կամ
կարելի էր ստեղծել, օրինակ՝ սիդան (համա-
կարգ), ֆունկցիա (պաշտոն), պատկա (դա-
դար), ինտոնացիա (հնչերանգ) և այլն: Առան-
նապես մերմելի է գրքում բազմաթիվ անգամ
գործածված էլիպսիկ բառը, որը այլ բան չի
մշակակում, եթե ոչ զեղչված, ուրեմն և պետք
է գործածվեր այս տերմինը:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Գ. Գարե-
գինյանի «Շաղկապները մամանակակից հայե-
րենում» աշխատությունը, չնայած իր թերու-
թյուններին, գիտական պաշտոն մակարդակով
կատարված արժեքավոր լեզվաբանական ուսում-
նասիրություն է և նպաստ՝ արդի հայերենի
գիտական բերականության ստեղծման հանա-
պարհին:

Մ. ԽԱՆՏԻՅԱՆ

W. H. RUDT-COLLEBERG, *The Rupenides, Hethumides and Lusignans, the structura of Armeno-Cilician dynasties*, Calouste Gulbenkian Armenian Library, Paris, 1963.

Վ. Հ. ՌԱՍԻՏ-ՎԱՆԵՆԵՐԿ, *Ռուբինյաններ, Հեթումյաններ և Լուսինյաններ, Նիլիկյան հայկական ղեկավարների կառուցվածքը*, Հայկական մատենադար Գալուստ Կյուպեկյան հիմնադրույան, Փարիզ, 1963:

Լույս է տեսել արևելագետ Ռյուտ-Քոլենբերգի ուսումնասիրությունը՝ նվիրված Նիլիկյան Հայաստանի Ռուբինյանների, Հեթումյանների և Լուսինյանների տոհմագրությանը: Այդ կարևոր Կարգի մասին շատ քիչ է գրված: Հայագետները իրենց ուսումնասիրություններում գրեթե անտե-

սել են Նիլիկյանի հայկական թագավորության դինաստիաների տոհմագրության պատմությու-
նը, գլխավորապես արժարժելով տնտեսական, սոցիալական, կրոնական, դիվանագիտական և իրավական հարցեր:

Ռյուտ-Քոլենբերգի ուսումնասիրությունը գա-

լիս է լրացնելու այդ բացը Գիրքն սկսվում է պատմական ակնարկով: Ընդարձակ տոհմագրական աղյուսակներում արված են Կիլիկիայի հայկական ֆեոդալական իշխանությունների կառուցվածքը, նրանց կապերն ու առնչությունները ինչպես ընդհանրական կայսրների, Իկոնիայի և սրբաբնական սուլթանությունների, այնպես էլ Անտիոքի, Երուսաղեմի և Կիպրոսի՝ խաչակիրների ստեղծած կոմսությունների հետ: Բացի Ռուրիկյանների տոհմագրությունից նա երկու տոհմագրական աղյուսակ է հատկացրել Հեթումյաններին: առաջինը վերաբերում է Հեթումյանների Համբրոնի տիրապետության շրջանին (I—II), իսկ երկրորդը՝ Կիլիկիայում նրանց ստեղծած հայկական թագավորության շրջանին (II—III): Այս աղյուսակները մեծ արժեք ունեն և նորություն են հայագիտության մեջ:

Կիլիկիայի հայկական թագավորության պատմության թագավորության ուսումնասիրության համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հայացած իշխաններ Իրեկին և Սիդոնի (II—III), Անտիոքի արքայազների (A), Հաթինյանների Կիպրոսում ստեղծած հայկական իշխանությունների վերաբերյալ աղյուսակները: Տիրաբանչուր տոհմագրության մեջ, որոնք կազմված են խնամքով և հմտությամբ, տրույալ է ամեն մի դորձի սզգակցական, ժառանգական կապերը, ծննդյան, ամուսնության, ժաման և մահվան թվականները: Ռուրիկ-Քոլեն-Բերդի հետազոտությունը խոշոր նշանակություն ունի Կիլիկիայի հայկական թագավորության միջնադարյան պատմության թագավորության ուսումնասիրության համար: Այն արդյունք է երկարամյա տրնաջան աշխատանքի և արժանի է խրախուսանքի:

Բարձր ցնահատկությամբ անվանի հայագետի ուսումնասիրությունը, անհրաժեշտ է նշել, որ այն գերծ չէ որոշ թերություններից և անբացատրելի կարող հարցադրումներից:

Սակայն է հեղինակը, երբ փորձում է Կիլիկիայի հայկական թագավորության պատմությունը անպայման կապել խաչակրաց արշավանքների պատմության հետ (էջ 9): Ընդհանրապես Կիլիկիայի հայկական իշխանություններից ոմանք սերտ հարաբերությունների մեջ են եղել խաչակիր ասպետական օրդենների և նրանց կողմից Արևելքում ստեղծված կոմսությունների հետ, բայց դա բոլորովին չի նշանակում, թե Կիլիկյան Հայաստանի պատմությունը խաչակրաց արշավանքների պատմության թաղկացուցիչ մասն է կազմում: Դեռ խաչակրաց արշավանքներից շատ առաջ հայերը Կիլիկիայում ստեղծել էին իրենց անկախ ֆեոդալական իշխանությունները: Բացի Հեթումյաններից (1071

թ.) և Ռուրիկյաններից (1080 թ.) Կիլիկիայում կային նաև թագավորի հայկական ինքնուրույն այլ իշխանություններ: զրանցից կարելի է հիշատակել Փիլարտոսի (Անտիոք), Վասակի (Մոլք), Սենեբերիմ Արծրունու (Կապադովկիա), Արղաշիր Արծրունու (Պիր), Թաթուլ (Մարաշ), Գոգ Վասիլի (Բաան), Կապուկան իշխանությունները, որոնք պարզ գեղ կառուարեցին հետագայում Կիլիկիայի հայաբնակ թագավորության կազմավորման գործում:

Առաջին խաչակրաց կոմսությունը Արևելքում ստեղծվել է հայ ֆեոդալների իրավունքների հաշվին: Սղեսիա հայկական թագաբը որը գրտնրվում էր Բորոսի իշխանության տակ, խաչակիրների զոհը դարձավ խաչակիրների գործերի հրամանատար Բուդուին մտերմություն հաստատելու Թորոս իշխանի հետ, Երաբեկամարարս մտավ թագաբը, որից հետո ուխտագրվեցին Թորոսին սպանեց, իսկ Սղեսիայի ողջ հայ բնակչությունը թագաբից վտարեց: Ահա այսպես ստեղծեցին խաչակիր բախտախնդիրները իրենց առաջին կոմսությունը Արևելքում:

Մենք համաձայն չենք հեղինակի բերած այն տոհմագրական տվյալների հետ, որոնց նա փորձում է ցույց տալ, թե հայ թագավորները և արքայազները երկիրը կառավարել են համառակ կերպով:

Այսպես՝ 24-րդ էջում Հեթում Ա թագավորի (իմա՝ Հեթում Բ) և Ռուբեն-Ռայմոնդի մասին բերված թվական տվյալները ցույց են տալիս, որ իբր թե նրանք 1211—1218 թթ. Կիլիկիայի հայկական թագավորությունը համատեղ են կառավարել: Նախ՝ Հեթում Ա-ն այնպիսի մի հզոր ինքնակալ էր, որ հազիվ թե կարիք զգալու միտրիչ օգնության երկրորդ՝ հարց է ծագում: Թե Անտիոքի իշխան Ռուբեն-Ռայմոնդը ինչպեպ ուներ Կիլիկիայի հայկական թագավորության հետ, որ Կիլիկիայում մասնակցեր երկրի կառավարման գործին: Ռուբեն-Ռայմոնդը Հեթում Ա թագավորի եղբայր Ռուբեն Բ-ի թույն էր, նրա Ալիթ գյուղեր և Անտիոքի Ռայմոնդ Գլատին իշխանի որդին, որը ինչպես ճիշտ կերպով ցույց է տրված Վ. Հանգլուայի նյութերի և հոգվածների մեջ («Le trésor des chartes Arménie») ամենուրեք ստորագրում է «prince d'Antioche», այսինքն Անտիոքի իշխան: Նա ոչ միայն Հեթում Ա թագավորի հետ համատեղ չի կառավարել Կիլիկիայի հայկական թագավորությունը, այլ Կիլիկիայում երբեք չի էլ եղել: Նույնը կարելի է ասել Հեթում Ա թագավորի և թագաժառանգ Հեթումի մասին: Ինչպես հայտնի է, Հեթում թագաժառանգը 1266 թ. Մառի ճակատամարտում ընկավ մամլուքների սուլթան Բեյբարսի ձեռքը և, որպես գերի, պահվում էր

Կահիրեում: Հեթում Ա թագավորը, երկար ջանքերից հետո կարողացավ 1268 թ. ազատել նրան գերությունից: Նրա Լևոն հայրենիք վերադարձավ, Հեթում Ա-ն հրաժարվեց գահից և վանք մտավ, իսկ հայոց թագավորությունը հանձնեց իր որդուն՝ Ահա ամրոզը պատմությունը:

Այդ նույնը վերաբերում է Հեթում և Թորոս արքայազններին: Ինչպես հայտնի է, Կիլիկիայի հայկական թագավորության գահին տիրանալով՝ Հեթում Բ-ն երեք անգամ հրաժարվեց թագավորությունից և նորից թագավոր դարձավ (1288—1293, 1295—1296, 1299—1307 թթ.): 1293—1294 թթ. տասը ամիս ժամանակով թագավորությունը իր ձեռքը վերցրեց նրա եղբայր Թորոսը: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս համատեղ կառավարման մասին խոսք չի եղել:

Իրականությանը չի համապատասխանում նաև հեղինակի այն կարծիքը, թե Հեթում Բ-ն 1301—1307 թթ. եղել է ոչ թե հայոց թագավոր, այլ լուսամակալ (էջ 23): XIV դարի հայ մատենագիր Ներսես Պալիեկցի վկայում է, որ Հեթում Բ-ն 1303—1304 թթ., որպես հայոց թագավոր, չազան խանի պահանջով 10 հազարանոց հայկական զորքով մասնակցել է եգիպտական արշավանքներին և պարզեցվել Ղազան-խանի կողմից (տես «Մանր ժամանակագրություններ», հատ. II, էջ 188—189): Լևոն Գ-ն Հեթում Բ-ին փոխարինել է 1307 թ. նոյեմբերի 17-ին:

Սխալվում է հեղինակը, երբ գրում է, թե հայոց թագավորության խնամակալ Սիրադանը զոհվել է Լևոն Ա թագավորի դստեր՝ Թագածուհուհուհի Զարեի համար (էջ 23): Սիրադանին սպանեցին հայ իշխանները, որովհետև նա հայատյաց էր «բոստ բնական ատելությունն յունաց բնդ ազգս Հայոց» (Միք. Ասորի, էջ 505) և Լևոն Ա-ի մահից հետո դառնալով Զարեի խնամակալը, նպատակ էր դրել «առնուլ գիշխանությունն» (նույն տեղում, էջ 505), տապալել հայոց թագավորությունը, դարձնելով այն Անտիոքի պրովինցիան: Նրա սպանությունից հետո հայ իշխանները խնամակալությունը հանձնեցին Կիլիկիայի հայկական թագավորության գործերի գլխավոր հրամանատար Պոստանդին Պալլին:

Առանձին տոհմագրական ճյուղերում բերված թվական տվյալների մեջ կան վրիպակներ: Այսպես՝ H—I-ում նշված է, որ Հեթում Գ իշխանը ծնվել է 1151 թ. և ամուսնացել է 1153 թ.: Ա՝ 2 աղյուսակում նշված է, թե Հեթում Գ իշխանը ամուսնացել է 1253 թ., իսկ ապահարկան է տվել 1071 թ. (էջ 56, ծանոթ. 52): (H—2)-ում գրված է, թե Լևոն Բ-ի որդին՝

Բից Սմրատը ծնվել է 1277 թ., իսկ Սեպիր՝ 1269 թ.: Դա ճիշտ չէ: Նրանք երկվորյակներ Արև Հեթում Պատմիչի վկայությամբ «1275 թվին թագաւորն Լևոնի ծնաւ Սմրատ և Սպիրն խեղճի» (Երկորեակ)» («մանր ժամանակագրություններ», հատ. I, էջ 84): Նույն աղյուսակի մեջ հեղինակը բաց է թողել Ռուբեն իշխանի անունը: Սմրատ Սպարապետը ոչ թե մեռել է 1275 թ. (տես H—2), այլ հայրենիքի համար զոհվել է Սարվանդիթարի ճակատամարտում 1276 թ. և այլև:

Գրախոսվող աշխատության մեջ խոսվում է նաև Կիլիկիայում գործող օրենքների մասին (էջ 27): Հեղինակի այն կարծիքը, թե Լևոն Ա թագավորը փորձեց իր թագավորության մեջ մտցնել «Նրուսաղեմի աստիճաններ», իսկ հայ իշխանները պահանջեցին ղեկավարվել «ին հայկական սովորույթներով», իրականությանը չի համապատասխանում: Լևոն Ա-ի թագավորության ժամանակ հայերը ղեկավարվում էին սովորույթային իրավունքով: Նրանք օգտագործում էին նաև բյուզանդական և արաբական օրենքները: Նրուսաղեմի օրենքները հայ կենցաղի մեջ մուտք չեն գործել: Լևոն Ա թագաւորի մահից հետո հայերը փորձեցին օգտագործել Անտիոքի օրենքները: 1253 թ. Սմրատը թարգմանեց այդ օրենքները, բայց հայերի համար դրանք խորթ էին և անընդունելի: Այդ էր պատճառը, որ նա հարկադրված եղավ 1265 թ. կազմելու նոր, օրինակելի «Դատաստանագիրք», որը գործնական նշանակություն ունեցավ Կիլիկիայի հայկական թագավորության համար: Այս տեսակետից անհիմն է հեղինակի այն պնդումը, թե հայ իշխանները մի ամբողջ դար չէին կարողանում որոշել թագավոր օժելու կարգը (էջ 27): Ընդհակառակը, Սմրատ Սպարապետի «Դատաստանագիրք» կազմվելուց հետո հայոց սրբունիքը սկսեց ղեկավարվել ոչ թե «ին հայկական սովորույթով», համաձայն որի գահը ժառանգում էր միայն թագավորի ավագ որդին, այլ Դատաստանագրքով, բոստ որի թագավոր էր օժվում որդիներից լավագույնը, հավանությունը «ամեն գաւառաւ որ գաւառապետացն տեսովն և սուրբ եկեղեցւոյն, որ յոր հաճին» (Սմրատ, Դատաստանագիրք, էջ 7): Ինչպես տեսնում ենք, հեղինակի ուշադրությունից վրիպել է Սմրատի Դատաստանագիրքը, որը հայ իրավագիտական մտքի պատմության լավագույն հուշարձաններից մեկն է:

Մեր այս մասնակի գիտողությունները չեն նսեմացնում անվանի գիտնականի կատարած մեծ աշխատանքը: Կիլիկիայի հայկական թագավորության տոհմագրությունը նվիրված այս ուսումնասիրությունը հայագիտության վերջին,

շրջանի նվաճումներից մեկն է. Այն կարևոր նշանակություն ունի ոչ միայն հայ ժողովրդի պատմության, այլև Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների թաղաքական ու դիվանագիտական

կապերի ու առնչությունների պատմության բազմակողմանի ուսումնասիրություն համար:

Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

К. Н. ЮЗБАШЯН, *Академик Иосиф Абгарович Орбели*, Изд. «Наука», Москва, 1964, 158 стр., цена 40 коп.

В этой интересной книге, изданной Институтом народов Азии АН СССР (редактор—чл. корр. АН СССР К. В. Тревер), увлекательно и подробно рассказывается о жизни и деятельности академика И. А. Орбели (1887—1960)—о разностороннем историке культуры и замечательном гражданине Советского Союза, умелом администраторе и талантливом организаторе научных исследований, замечательном ораторе, воспитателе многих молодых ученых и крупном общественном деятеле.

И. А. Орбели родился в Кутанси, в армянской семье «с давними культурными традициями». Учился он в Тифлисской третьей гимназии, где его отец Абгар Иосифович Орбели служил товарищем прокурора судебной палаты, а мать Варвара Монсеевна, из известного рода Аргутинских-Долгоруких, здесь же долгие годы преподавала французский язык. Их старший сын, Рубен Орбели (1880—1943) известен как один из зачинателей подводной археологии в СССР, а второй сын, Леон Орбели (1882—1958), был физиологом с мировым именем.

И. А. Орбели, отлично учась в гимназии, захотел «овладеть и каким-либо ремеслом», а потому «прошел курс обучения столярному делу—искусству краснодеревца» и освоил ремесло каменщика, а позже, уже ученый (1917), обучается в Академической типографии наборному делу, где он сам набирал некоторые свои и чужие труды и руководил печатанием крупной научной серии, он же прославился как глубочайший знаток музейного дела.

После успешного окончания гимназии И. А. Орбели стал студентом Петербургского университета. Здесь он проходит курс историко-филологического факультета по отделению классической филологии и слушает лекции таких известных ученых, как С. А. Жебелев (1867—1942), В. А. Жуковский (1858—1918), В. В. Бартольд (1869—1930), П. К. Коковцев (1861—1942), Б. А. Тураев (1863—1920), Я. И. Смирнов (1869—1918), М. И. Ростовцев (1870—1952), Ф. Ф. Зелинский (1859—1946), Б. Ф. Формановский (1870—1928), В. Н. Бенешевич (1874—1938), С. Ф. Ольденбург (1863—1934) и др.

Неутомимый и высокоодаренный студент не удовлетворяется упомянутым разделом науки; он же проходит полный курс факультета восточных языков по армяно-грузино-персидскому разделу. Здесь его учителями были Н. Я. Марр (1864—1934) и ученики последнего И. А. Джавахишвили (1876—1940), Н. Г. Адонц (1871—1942) и др.

Труды И. А. Орбели посвящены проблемам и вопросам искусства, истории и филологии Армении, Грузии, Азербайджана, Дагестана, Средней Азии, Ирана и шире—стран мусульманского Востока. У него же имеются труды по греко-римскому и русскому искусству.

И. Орбели был величайшим знатоком армянского героического эпоса; под его редакцией и предисловием вышли книги «Давид Сасунский» (на русском и армянском языках, 1939) и «Армянский героический эпос» (Ереван, 1950, на арм. и русск. язы-